ՀԱՅԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆԸ ԵՒ ԳԱՆՁԱՍԱՐԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԸ ԱՋԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՈՒՂԵԾՐՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոս Աղեքսանդր Ա Ջուղայեցու (1706-1714) մահից հետո իր իսկ կտակի համաձայն կաթողիկոսական աթոռը պետք է զբաղեցներ «Նոր Ջուղայի» առաջնորդության մեջ իր հաջորդ Մովսես Ջուղայեցին[1]: Սակայն, երբ Մովսեսը հրաժարվեց կաթողիկոսությունից, Ս. Էջմիածնի միաբաններն ստիպված եղան այլ թեկնածու փնտրել: Ընտրությունը կանգ առավ Ս. Ամենափրկիչ վանքի միաբան երկու եպիսկոպոսներից Աստվածատուր Համադանցու վրա, որն էլ Ամենայն Հայոց Կաթողիկոս օծվեց 1715 թ. մայիսի 7-ին[2]: Սիմեոն Երևանցին նկարագրում է նրան որպես «այր հեզաբարո և հոգելի, շնորհաշատ և գեղեցկատես, ջերմեռանդ և արտասուիչ, որ արար զբազում բարերարութիւնս և զտառապանս»[3]:

Հայոց զինված ապստամբության նախապատրաստման ժամանակաշրջանում չափազանց կարևոր էր այդ գործում Աստվածատուր Ա Համադանցու (1715-1725) ունեցած դիրքորոշումը: 1716 թ. հուլիսի 15-ին Աստվածատուր Կաթողիկոսը Էջմիածնում հանդիպում էր ունեցել զինված ապստամբությունը գաղտնաբար նախապատրաստող գործիչներից մեկի՝ Մինաս վարդապետ Տիգրանյանի հետ[4]: 1716 թ. հուլիսի 15-ից 23-ը տևած խորհրդակցությունները վկայում էին, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսը նվիրված էր Հայաստանը զենքով ազատագրելու գաղափարին, սակայն միաժամանակ բացահայտում էին նրա զգուշավորությունն ու շրջահայեցությունն այդ հարցում[5]:

Ռուսական կայսրության պետական դեսպանական վարչությանը ներկայացրած 1717 թ. մարտի 14-ի զեկուցագրում Մինաս վարդապետ Տիգրանյանը հայտնում էր, որ, իրենից տեղեկանալով ազատագրական ծրագրերի և ռուսներից սպասվող օգնության մասին, Ամենայն Հայոց Կաթողիկոսը «շատ ուրախացավ և բանավոր նրան պատասխանեց, որ այն գործը, որի մասին վարդապետն իրեն տեղեկացրեց, շատ բարի է և նա ցանկանում է այդ գործում ծառայել և օժանդակել Նորին ցարական մեծությանը, միայն թե նա մեծ մտավախություն ունի շահից, քանզի դա մեծ գործ է. այնպես չստացվի, որ իրենք բոլորը ավերածությունների ենթարկվեն: Սակայն, եթե Նորին ցարական մեծությունը ցանկանա Պարսկաստանի դեմ պատերազմել և իր զորքերն այս երկիր ուղարկել, ապա թող նույն վարդապետի կամ

1 Տե՛ս **Մ. Օրմանյան,** Ազգապատում, հատ. բ., Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2001, էջ 3239:

2 Տե՛ս անդ, էջ 3243:

3 **Սիմէօն Կաթողիկոս Երեւանցի**, Ջամբռ, Գիրք, որ կոչի յիշատակարան արձանացուցիչ, հայելի և պարունակող բնաւից որպիսութեանց Սրբոյ Աթոռոյս և իւրոյ շրջակայից վանօրէիցն, Վաղարշապատ, 1873, էջ 27:

4 Տե՛ս "Армяно-русские отношения в первой трети XVIII века", Сборник документов, т.II, часть I, Ер., 1964, էջ 367:

5 Տե՛ս անդ, էջ 358, 367:

այլ հավատարիմների միջոցով նախապես իրեն լուր տա, թե ինչ է նրանից ակնկալում, իսկ ինքը՝ իր բոլոր հավատարիմների հետ, պատեհ միջոցը գտնելով, այդ գործում հավատարմորեն և որքան կարող է օգնություն ցույց կտա...»[6]:

Այդ պատասխանը գրավոր ներկայացնելու Մինասի խնդրանքին Ամենասուրբ Կաթողիկոսը խոհեմաբար առարկում է՝ ասելով. «...գրավոր այս բանը շարադրելը և ցարին հավատարմություն հայտնելն անհնար է, քանզի այս գործը պետք է հույժ գաղտնի պահել պարսիկներից և որոշ հայերից, իսկ վարդապետին քողարկության համար կտա մի նամակ, ուր կասվի թե նա եղել է պատրիարքի մոտ և զեկուցել նրան ամեն տեսակ գործերից, որոնք ընդունվել են սիրով և հաճությամբ»[7]:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ հանդիպումից հետո Մինաս վարդապետ Տիգրանյանը եղել էր նաև Եսայի Հասան-Ջալալյանի մոտ՝ Գանձասարի վանքում: Այդ հանդիպման մասին Մինաս վարդապետը խոսում է իր զեկույցի շարունակության մեջ. «Եսայի Հայրապետը, լսելով նրա (Մինասի) հայտարարությունը, գործն ընդունեց մեծ ուրախությամբ և ասաց, որ ինքը ցարին այդ գործում իր հնարավորությունների ներածի չափով կծառայի ամենայն հավատարմությամբ և հանուն այդ հավատարմության իր ուղերձն[8] ուղարկեց վարդապետի հետ»[9]:

Մինաս վարդապետը նշում է նաև, որ Ս. Էջմիածնի և Գանձասարի կաթողիկոսների ենթակայության ներքո գտնված հայ գյուղացիների և վաճառականների թիվը հասնում է մոտ 200 հազար մարդու, և եթե առիթ լինի պատերազմելու Պարսկաստանի դեմ, ապա ինքը հույս ունի, որ նրանք բոլորը կթեքվեն ցարի կողմը, քանի որ նրանք պարսիկներից մեծ զրկանքներ են կրում[10]:

Զեկուցագրի վերջում Մինաս վարդապետ Տիգրանյանը, համեմատելով Ամենայն Հայոց Կաթողիկոս Ամենասուրբ Ա Համադանցու և Գանձասարի Կաթողիկոս Եսայի Հասան-Ջալալյանի՝ ազատագրական պայքարում ցարի հետ համագործակցելու վճռականությունը, գրել է. «Եսայի Հայրապետը, ինչպես Մինաս վարդապետը կարող էր հասկանալ նրա վիճակից, պահանջված պատերազմական պահին բացարձակապես հակված կլինի Ցարական Մեծության կողմը, իսկ իր տի-

6 **Г. Эзов,** Сношения Петра Великого с Армянским народом, СПб., 1898, с. 322.

7 Անդ, էջ 323:

8 1716 թ. օգոստոսի 10-ի իր ուղերձում Եսայի Հասան-Ջալալյանը, դիմելով ցարին, նշում էր. «...Իսկ այժմ կրկին առաքեալ ի մեծէ թագաւորութենէդ եղբայրս մեր զՄինաս վարդապետս, որ յազգէ մերմէ, եկն եհաս երկիրս մեր և առ մեզ և զբարի և ասպուածահաճոյ կամք և խորհուրդ քաջազօր թագաւորութեանդ ծանոյց մեզ: Եւ մեր լսելով զուարճացաք՝ ցնծացաք և ի հոգի և ի մարմին և յոժար սրտիւ կամիմք ընդ հովանեաւ թևոց քոց լինիլ, եթէ հաճեսցի տերութիւն քո ի մեզ...Մեք պատրաստ եմք ընդ առաջ քո ըստ իմում՝ կարողութեանս և մեր նահանգիս մելիքովք, մեծամեծովք և փոքումք և յորժամ կամեսցի հզօր և մեծ թագաւորդ յաջապարել այսր կամօքն Աստուծոյ, յայնժամ՝ զնշան գործոյն խնդրեմք ցուցանել մեզ, զի առաւել հաստատ լիցուք ի վերայ խորհրդեանս, և ապա զամենայն հանգամանք երկրիս ծանուցուք առաջի քոյ: Բայց այժմ ես փոքր ի շատէ առ բերան ասացեալ եմք Մինաս վարդապետիդ, և ինքն ես ակնատես եղև ամենայն որպիսութեանդ տեղեացս, զոր յայտնելոց է առաջի մեծի թագաւորութեանդ...» (**Г. Эзов**, նշվ.աշխ., էջ 316):

9 Անդ, էջ 323-324:

10 Տե՛ս անդ, էջ 325, հմմտ. "Армяно-русские отношения в первой трети XVIII века", Сборник документов, т.II, часть I, էջ 370:

բապետության տակ գտնվող հայ ժողովուրդը նրան լսում է, և նրա հորդորով նույն հակվածությունը կունենա: Իսկ մյուս Հայրապետը, թեև բանավոր հայտարարում էր իր հակվածության մասին այն գործում, սակայն Եսայու պես հուսալի չէ այն գործում, քանզի շահից ավելի է երկնչում»[11]:

Կարծիք է հայտնվել, որ Աստվածատուր Կաթողիկոսի նկատմամբ Մինաս վարդապետի արտահայտած այս մտավախությունը չափազանցված էր և ինչ-որ չափով նաև միտումնավոր, ինչից եզրակացվել է, որ «ամենայն հավանականությամբ Մինասը ռուսներին դիտավորյալ էր ետ պահում Աստվածատուր Կաթողիկոսի հետ աշխույժ կապեր հաստատելու մտքից՝ նպատակ և առաջադրանք ունենալով առավելագույնս ապահովագրել Ս. Էջմիածնի անվտանգությունը»[12]:

Հավանական է, որ Աստվածատուր Կաթողիկոսը պարզապես հնարավորություն չուներ ավելին խոստանալու կամ գրավոր համաձայնություն տալու, քանի որ ի պաշտոնե ստիպված էր զգուշավորություն դրսևորել՝ հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ երկրում իրավիճակը գնալով ավելի վտանգավոր էր դառնում: Այդ մասին Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը գրում է. «Տագնապալից կը դառնար հայերուն կացութիւնն ալ Էջմիածնի և Աղուանից կաթողիկոսական վիճակներուն մէջ հաւասարապէս, երբ Սիւնիներու մէկ ճիւղը՝ այսինքն Աֆղանիստանի և Պելուճիստանի բնակիչները՝ Արեւելքէն կու գային Շիի պարսիկներու դէմ, հարաւէն ալ Քուրդեր եւ հիւսիսէն Լեզգիներ 1718-ին կ'արշաւէին Սալմաստն ու Համատանը, ու բովանդակ Արարատը եւ կը դիմէին դէպի Ասպահան»[13]:

Խոսելով ստեղծված իրավիճակում Եսայի Հասան-Ջալալյանի ձեռնարկած քայլերի մասին՝ Օրմանյանը շարունակում է. «Եսայի, որ շարժումի գաղափարներով վառուած էր, ինքն ալ զգաց, որ արկածախնդիր կերպեր կրնան վնասակար ըլլալ, ուստի մէկ կողմէն յատուկ պատուիրակով Մինասին կը յանձնարարէր մեծ զգուշաւորութիւն»[14]:

Մյուս կողմից Եսայի Հասան-Ջալալյանը գիտակցում էր, որ առկա պայմաններում Գանձասարի կաթողիկոսությունը միայնակ ի վիճակի չէր կազմակերպելու ազատագրական պայքարը, ուստի անհրաժեշտ էր միավորել ուժերը Ս. Էջմիածնի հետ: Պատահական չէր, որ 1719 թ. Եսայի Կաթողիկոսն այցելեց Էջմիածին, ինչը պետք է դիտարկել որպես կարևոր քայլ ազատագրական պայքարի նախապատրաստության շրջանում:

Ամենայն Հայոց Կաթողիկոս Աստվածատուր Ա Համադանցին, չնայած Գանձասարի Կաթողիկոսին հակաթոռ՝ Ներսես Կաթողիկոսի նկատմամբ պահպանել էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մերժողական դիրքորոշումը, այնուամենայնիվ, քանի

11 Անդ:

12 **Ա. Այվազյան,** Հայոց եկեղեցին XVIII դարի հայ ազատագրական շարժման քառուղիներում, Երևան, 2003, էջ 31:

13 **Մ. Օրմանյան,** նշվ. աշխ., էջ 3260:

14 Անդ, էջ 3260-3261: Եսայի Կաթողիկոսը դեռևս 1718 թ. սեպտեմբերի 24-ի նամակով Մինաս վարդապետին զգուշացնում էր. «...իսկ եթէ այս նամակների մասին... որևէ մի չար մարդ կամ լրտես տեսնի կամ լսի՝ իմացած եղէք, որ մեր վերջը արդէն եկաւ, իսկ այդ գտնը հիմքից կքանդուի» (թ. նջՏՉ, նշվ. աշխ. էջ 327):

որ Եսայի Կաթողիկոսը չէր եկել իրեն շնորհավորելու, խստություն ցուցաբերեց և «վերստին տերունի առնէ զՇամախի, զՇիրվան, զՇաքի, և զշրջակայսն սոցա, և ինքն գրաւէ որպէս յառաջն լեալ էր»[15]: Այդ քայլով ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռի ուղիղ ենթակայության ներքո վերցրեց Հայ Առաքելական եկեղեցու նվիրապետության մեջ մտնող Գանձասարի կաթողիկոսության արևելյան թեմերը:

Երբ Եսայի Կաթողիկոսը գալիս է Էջմիածին, խոստովանում իր սխալները և օգնություն խնդրում, Ամենայն Հայոց Կաթողիկոսը ներում է Եսայիին, և նրանք հաշտվում են: Սիմեոն Երևանցի Կաթողիկոսն այդ մասին գրել է. «Ի ՌՃԿԸ թուոջն մերում Եսայի Կաթողիկոսն խոնարհեալ և մանաւանդ հարկեցեալ իսկ յաղքատութենէ՝ գայ ի Սուրբ Աթոռս ի յոտս Ամենաշնորհ Կաթուղիկոսին, և խոստովանելով զյանցանս՝ պատմէ զաղէտս աղքատութեան և զի ներքոյ բազմաց պարտուց անկանիլն. գթացեալ ի նա Ամենաշնորհ Կաթուղիկոսին, զկոնդակ մի շնորհէ նմա ի վերայ Շամախու և շրջակայիցն, զի ընկալցին զԵսայի Կաթուղիկոսն, և զնուիրական արդիւնսն ի նա յանձնեսցեն՝ որպէս նուիրակի ի Սրբոյ Էջմիածնէ գնացելոյ»[16]: Սակայն Շամախեցիները չընդունեցին Եսայի Կաթողիկոսին՝ ասելով, որ իրենք պատկանում են Ս. Էջմիածնին և չեն պատրաստվում հնազանդվել Եսայուն: Ուստի Եսային կրկին եկավ Էջմիածին (1721 թ.) և օգնություն խնդրեց Ամենաշնորհ Կաթողիկոսից: «Ապա և Ամենաշնորհ Կաթուղիկոսն կրկին գրէ զկոնդակ ի վերայ Շամախու, Շաքու, Ղաբալու, և այլոց շրջակայիցն, ծանուցանելով նոցա զկանոնս ի սրբոյն Գրիգորէ անտի, թէ՝ Աղուանից կաթուղիկոսքն որպէս թոռն և որդի հնազանս են լեալ Լուսաւորչի փոխանորդացն, և նոքա ևս զնոսա որպէս զորդի ի խնամս են պահեալ եւ օգնական են լեալ ամենայնի, իսկ երբեմն եթէ ոմանք ապստամբք են գտանեցեալք ի դոցանէ զմէնջ, մեք ևս զխնամս մեր եմք բարձեալ ի դոցանէ»[17]:

Ամենաշնորհ Կաթողիկոսը գրում է ևս մեկ կոնդակ, ըստ որի «նկատի առնելով Գանձասարի Աթոռին կարօտությունը, ուզելով զայն զօրացնել Խաչենի հակաթոռ Ներսէսի դեմ, Կենջայու (Գանձակ) վիճակն էլ Եսայիի կը թողուր, և Նախիջեւանի, Ազուլիսի, Ղափանի և Տփղիսի վիճակներուն վրայ ալ ժողովրդավարութեան կոնդակ կու տար»[18]: Այս կոնդակով, փաստորեն, Ամենաշնորհ Ա Համադանցին Գանձասարի կաթողիկոսությանն էր հանձնում բավականին ընդարձակ տարածքի հայկական թեմերի վերահսկողությունը: Դեռ ավելին, նա նաև ջանքեր էր գործադրում Եսայի Հասան-Ջալալյանի նկատմամբ բարյացկամ հանրային տրամադրություն ստեղծելու համար: Շեշտելով իր և Եսայիի մտերմությունը, ինչպես նաև Մայր Աթոռի ու Գանձասարի կաթողիկոսության միջև բարեկամական կապը՝ նա դիմում էր ժողովրդին. «Թէպէտ մեր էիք բնական՝ և մեր էք, սակայն մեք մերով կամաւ և յօժարութեամբ դմա շնորհեցաք ի սէր դորին և վասն աղքատութեան Գանձասարու

15 «Ջամբռ», էջ 83:
16 Նույնը, էջ 84:
17 Անդ:
18 **Մ. Օրմանյան**, նշվ. աշխ., էջ 3261:

աթոռոյն: Այսուհետեւ պարտիք հնազանդիլ և ընդունիլ զԵսայի Կաթուղիկոսդ ձեր, որում ներհակքն՝ մեզ են ներհակք»[19]:

Ինչպես տեսնում ենք Ամենայն Հայոց Կաթողիկոս Աստվածատուր Ա Համադանցին ուղղակի կերպով հայտարարում էր, որ այն մարդիկ, ովքեր թշնամական վերաբերմունք են դրսևորում Եսայի Հասան-Ջալալյանի նկատմամբ, նաև իր թշնամիներն են: Կոնդակի վերջին նախադասությունը, փաստորեն, ազատագրական պայքարի գաղափարին Ս. Էջմիածնի լիակատար համերաշխության վկայությունն էր: Վերոհիշյալ կոնդակները միտված էին զգալիորեն ամրապնդելու սպասվող ազատագրական պատերազմի մեջ առաջամարտիկի դեր ստանձնելու ընդունակ արցախահայության դիրքերը և բարձրացնելու Արցախի հոգևոր-քաղաքական կենտրոն Գանձասարի հեղինակությունը[20]:

Այսպիսով, պարզ է դառնում, որ Եսայի Հասան-Ջալալյանի այցելությունները Ս. Էջմիածին չէին կրում միայն եկեղեցական-ելևմտական իմաստ: Դրանք առաջին հերթին մատնանշում են Հայ Առաքելական Եկեղեցու հայրերի դիրքորոշման ուղղվածությունը դեպի զինված պաշտպանության կազմակերպումը:

19 «Ջամբռ», էջ 84:

20 Տե՛ս **Ա. Այվազյան**, նշվ. աշխ., էջ 32: